ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտակության թեման Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ Արմինե Թևադորոսյան

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Մ. Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոց

Մենթոր ուսուցիչ Ռ. Աղաջանյան

ԱՐՄԱՎԻՐ-2022

Բովանդակություն

1. Նախաբան 3
2. Գրականության ակնարկ 10
3. Գործնական համատեքստ 12
4. Եզրակացություններ 16
5. Գրականության ցանկ 21
6. Դասապլաններ և հավելվածներ 22

1. Նախաբան

ՈՒժեղ երևակայությունը իրադարձություն է ծնում: /Մոնտե/

Աշխարհը վերազինվում է նորագույն տեխնոլոգիաներով և ներկայիս տեխնիկապես հագեցված «տեղեկատվական գրոհի» ժամանակաշրջանում մեծ խնդիր է սովորողների համար հետաքրքրություն ներկայացնող ստեղծագործական մեթոդի ընտրությունը. այն պետք է լինի նորույթ, հաճելի և գրավիչ ու խթանի նրանց հետաքրքրությունը:

Մասնագիտական շուկայում մրցակցությանը դիմակայելու համար մասնագետներին անհրաժեշտ են կոմպենտենցիաներ, որոնց շնորհիվ հնարավոր է գտնել նոր գաղափարներ, խնդրի անսովոր լուծումներ, արագ արձագանքել միջավայրի փոփոխություններին, մշակել յուրօրինակ ռազմավարություններ: Արդի ժամանակաշրջանը ու նրա կառավարումը պահանջում է ուրույն մտածող, ստեղծագործ, վառ երևակայությամբ օժտված հավակնոտ մասնագետներ, քանի որ արդեն իսկ բավարար չեն միակ ճիշտ լուծում ունեցող խնդիրները, անհրաժեշտ են այլընտրանքներ, այլընտրանքային լուծումներ: Եվ մերօրյա ստեղծար անձը պահանջված է հասարակության զարգացման բոլոր փուլերում: ՈՒստի ինչպես գտնում է Ս. Մասլոուն, պետք է մշակվի ուսուցման նոր տիպ՝ ուղղված նոր, գործունյա, ստեղծարար, ինքն իրեն վստահող, ազատ մարդու ստեղծմանը: [1]

Աշխատանքի նպատակն է աշխարհագրություն առարկայի դասավանդման միջոցով խրթանել աշակերտների երևակայական ներուժը, զարգացնել ստեղծարարական մտածողությունը և պատրաստել արդի ժամանակներին համապատասխան աշխարհայացքով օժտված մրցունակ մասնագետներ՝ բոլոր մասնագիտությունների գծով:

Դրան հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ փոխկապակցված խնդիրները.

• հիմնավորվել է աշխարհագրության դասընթացը,որպես սովորողների ստեղծարարական ունակությունների զարգացման բաղադրիչ,

• փորձարկվել և խթանվել է սովորողների երևակայական ներուժը, որպես

ստեղծարարական ունակությունների զարգացման գլխավոր գործոն,

• բացահայտվել են ստեղծարարական գործոնների և մանկավարժական կոմպենտենցիաների միջև առկա կապերը:

2. Գրականության ակնարկ

Կառավարչական գործունեության մեջ ստեղծարարությունը ամենակարևոր ներուժն է և հարստությունը, որի առկայության շնորհիվ ստեղծվում են նոր գաղափարներ, կազմակերպվում և խթանվում է նորանոր արդյունքի ստեղծումը, մշակվում են գործունեության ճկուն ռազմավարություններ: Ստեղծարարության զարգացումը ժամանակի հրամայականն է և դիտարկվում է որպես զարգացման մեխանիզմ, հասարակության առաջընթացի շարժիչ ուժ, նոոսֆերայի ստեղծող, որպես անհրաժեշտություն կյանքի անորոշ, անկանխատեսելի իրադարձություններում: [2]

Ստեղծարարությունը չափազանց արժեքավոր է մարդկանց և հասարակության համար: Այն կազմված է արտադրողականության, առողջության հետ և օգուտ է բերում մարդկանց, հասարակությանը: [3]

Անձնային զարգացման մակարդակում ստեղծարարության զարգացումն ապահովում է բավարարվածություն, ինքնանույնականացման աճ, ինչպես նաև ընդլայնում է մասնագիտական զարգացման հնարավորությունները: [4]

Ստեղծարարության էությունը դիտարկվում է Լ. Գիլֆորդի, Պ. Թորենսի, Ֆ. Վիլյամսի և այլոց հայեցակարգերում: Ըստ ամերիկյան հետազոտող - մանկավարժ Պ. Թորենսի «ստեղծարարությունը» ոչ թե հատուկ, այլ ընդհանուր կարողություն է, որը հիմնվում է ընդհանուր ինտելեկտի, անձնային որակների և արդյունավետ մտածողության կարողությանվրա: [5]

Ջ.Գիլֆորդը առանձնացնում է ստեղծարար մտածողության չորս չափանիշներ՝սահունություն, ճկունություն, յուրօրինակություն և մշակվածություն:[6]

Ըստ Ֆ. Վիլյամսի ստեղծարարությունը մտածողության և անձնային որակների որոշակի ամբողջություն է, որը նպաստում է ստեղծագործության դրսևորմանը: [7]

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք ասել, որ ստեղծագործական մտածողությունը կամ կրեատիվությունը պարտադիր է յուրաքանչյուր այն մարդու

համար, ով ստեղծում է իր սեփական արտադրանքը, այլ ոչ թե պատճենավորում է ուրիշինը: Արդյունքում մենք կկարո-ղանանք արդյունավետ մտածել միայն այն ժամանակ, երբ մեր երևակայությունը սկսի անդադար ճամփորդել՝ պարբերաբար հանգեցնելով մեզ նոր գաղափարներ՝ մղելով ստեղծարարական միջավայր:

3. Գործնական համատեքստ

ՈՒսուցման և ուսումնառության բարելավումը հնարավոր է միայն կրթության մեջ նոր գործնական կարողությունների ու հմտությունների ձևավորման պարագայում: ՈՒսումնառության ընթացքում գործնական կարողությունների և հմտությունների որակներ սովորողները ձեռք են բերում տեսական գիտելիքների շնորհիվ, որոնք բացահայտվում են փորձարարական պրակտիկայում և ուղղված են տեսական գիտելիքների խորացմանն ու աշխատանքային որոշակի մեթոդների յուրացմանը:

Ստեղծարարական ունակություններով օժտված սովորողը մասնակից լինելու սեփական ուսումնառության պլանավորման, իրականացման և վերլուծության փուլերին՝ նորովի պատկերացումներով է սովորում սովորել: Սովորողների գործնական կարողությունները և հմտությունները ձևավորվում են գործնական աշխատանքների առաջադրման շնորհիվ, որոնք սովորողին մղում են ստեղծագործական դաշտ:

Գործնական աշխատանքները կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում, այդ թվում նաև աշխարհագրության ուսուցման բնագավառում: Այն ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է՝ հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված ութ առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու համար: Այն կառուցվում է աշխարհագրություն առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական պարապմունքների ժամանակ սովորողները ձեռք են բերում ուսումնագիտական գրականության հետ աշխատելու, աղյուսակներ կազմելու և վիճակագրական տվյալներ վերլուծելու հմտություններ, իսկ լաբորատոր աշխատանքների արդյունքում սովորողների մոտ ձևավորվում են հետազոտությունների, գիտափորձերի իրականացման համար անհրաժեշտ հմտություններ:

Ըստ սովորողի գործունեության ձևի գործնական աշխատանքները բաժանվում են երեք խմբի՝

• վերարտադրողական /ինչ է սովորել և կարողանում անել սովորողը/,

• մասամբ որոնողական /երբ սովորողը ոչ միայն սովորել է, կարողանում է անել, այլև պետք է կատարի լրացումներ և լուծի իրեն առաջադրված խնդիրները/,

• ստեղծագործական /երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդիրների համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ:

Իմ ընտրությամբ փորձագիտական խմբերին /3 խումբ/ առաջադրված գործնական աշխատանքի տեսակը համարում եմ ստեղծարարական հմտությունների բացահայտման միջոց, քանի որ առկա տեսական գիտելիքներով պայմանավորված հարուստ տեղեկույթի շնորհիվ սովորողները կկարողանան իրենց դրսևորել ինչպես նորարար մտածելակերպով օժտված ստեղծարար անձիք:

Այդ նպատակիս հասնելու համար, որպես թիրախային և փորձարարական խումբ ընտրել եմ 6-րդ դասարանը, իսկ հանձնարարվող գործնական աշխատանքի տեսակը՝ խմբային հետազոտական: Կատարվելիք գործնական աշխատանքի առաջադրված թեմա եմ ընտրել «Սահարայի տնտեսական յուրացումը»:

Աշխատանքիս նպատակն է արդի տեխնոլոգիական ժամանակներին համահունչ ստեղծարարական մոտեցումներով կազմակերպել Աֆրիկայի անապատային ոչ պիտանի տարածքների տնտեսական յուրացումը:

Գործնական աշխատանքը արդյունավետ կազմակերպելու համար սովորողներին նախապես տրամադրվել է տեսական հարուստ գիտելիքներ Սահարա անապատի բնակլիմայական պայմանների վերաբերյալ:

Աշխատանքի կատարման ժամանակ դասարանը բաժանվել է երեք փորձագիտական խըմբերի /յուրաքանչյուրում 8 սովորող/, որոնք նախապես ունեին հարուստ տեսական գիտելիքներ Սահարա անապատի մասին: Յուրաքանչյուր խմբի տրվում է ուրվագծային քարտեզ, թղթեր և մատիտներ: Ամեն խմբի համար

որոշված առաջադրանքի տեսակը և կազմակերպման ձևը գրառվում է գրատախտակին: [Տես. հավելված 1]

Ամեն խումբ իրեն առաջադրված բանալի բառերով կազմում է հինգ նախադասություն:[Տես. հավելված 2]

Ապա ուրվագծային քարտեզում Սահարայի զբաղեցրած համապատասխան տարածքում գծապատկերներով և պայմանական նշաններով խմբերը պատկերում են այդ հինգ նախա-դասություններով պայմանավորված՝ երևակայական արդյունքները, այնպես, որ առանց դրանց ընթերցելու ուրվագծային քարտեզին նայելիս յուրաքանչյուր ոք կարողանա հասկանալ ստեղծարարական որակներով արտահայտված միտքը: Իսկ այդ միտքը պետք է լինի համահունչ խմբի կազմած նախադասություններին:

Անմիջապես դասի ընթացքում կատարված գործնական աշխատանքի արդյունքները դի-տարկվեցին և փորձագիտական խմբերը գնահատվեցին:Իսկ սովորողները հնարավորություն ունեցան դասի ավարտին ստուգելու իրենց առաջադրված անսովոր խնդիրների կա տարման ճշտությունը՝ ինքնատիպ և ստեղծարարական լուծելիության պայմաններում:

Գնահատվեցին և ցուցադրվեցին խմբերի լրացված ուրվագծային քարտեզները: [Տես. հա-վելված 3]

Գործնական աշխատանքի ամենալավագույն արդյունքը ներկայացրեցին 3-րդ փորձագիտական խմբի սովորողները, որոնք իրենց առաջադրված հասկացություններով կազմված նախադասությունները այնպես էին ձևակերպել, որը շատ այլընտրանքային լուծում էր պահանջում և ենթադրում էր երևակայության բարձր մակարդակ:

Գործնական աշխատանքի 2-րդ արդյունքը ապահովվեցին 1-ին փորձագիտական խմբի սովորողները, որոնք իրենց նախադասությունների երևակայական պատկերման ճշտություններ ուրվագծային քարտեզի վրա կատարել էին որոշակի թերություններով: Նման պարագայում փորձագիտական խմբի երևակայության մակարդակը գնահատվեց միջին:

Գործնական աշխատանքի ամենացածր արդյունքը ներկայացրեցին 2-րդ փորձագիտական խմբի սովորողները, որոնք ոչ միայն թերացել էին նախադասությունների կազմման պարագայում, այլև դրանք ուրվագծային քարտեզներում բովանդակային առումով ճիշտ ներկայացնելու գործում: Նման աշխատանքի կատարման պարագայում երևակայության մակար-դակը գնահատվեց ցածր: [Տես. հավելված 4]

Այսպիսով նոր աշխարհում ստեղծարարությունը դիտարկվում է որպես կառավարչական գործունեության իրականացման կարևոր գործոն, քանի որ այն նպաստում է յուրօրինակ որոշումների արագ ընդունմանը և նորարարությունների ներմուծմանը: Ռ. Ստենբերգը և Լյուբաշը նշում են, որ ստեղծարար անձիք ոչ թե պարզապես տեսնում են իրերը նորովի, այլև նրանց դուր է գալիս գտնել իրերի մեջ նոր բան, ինչն էլ էապես առանցքային է ստեղծարարական գործունեության մեջ, որի արդյունավետության համար անհրաժեշտ են ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլ նաև հմտություններ և կարողությունները, որոնք անձը ձեռք կբերի գործնական աշխատանքի հմտացման պայմաններում: Ստեղծարարությունը համարվում է որպես անձի ինտեգրալ որակ: Այն ամբողջությամբ անձնային և ինտելեկտուալ բնութագրերի համալիր է, ինչը թույլ է տալիս մարդուն արդյունավետ գործել անորոշության, նորույթի իրադրությունում: Այն առօրեականության, միօրինակության, կոմֆորիզմի որոշակի հակադրություն է, նաև մտածողության, հույզերի և շփման քարացածությունը հաղթահարելու գործընթաց: [8]

4. Եզրակացություններ

Ստեղծարարական ունակությունների զարգացման հիմքը և խթանիչ ուժը համարվում է ժամանակակից կրթությունը և դպրոցը: Ժամանակակից կրթության բնագավառներից է նաև դպրոցում դասավանդվող աշխարհագրության դասընթացը: Իմ համոզմամբ աշխարհագրության դասընթացը կարող է զարգացնել սովորողների ստեղծագործական ունակությունները և ձևավորել ժամանակի պահանջներին համապատասխան անձնային և մասնագիտական որակներ:Այդ խնդրի լուծման համար ընտրել եմ 6-րդ դասարանի «Մայրցամաքների ու օվկիանոսների աշխարհագրություն» դասընթացը, իսկ առաջադրված թեման՝ Աֆրիկան:

Հետազոտական աշխատանքիս ընթացքը սկսել եմ հետևյալ ենթաթեմաներից.

- Աֆրիկայի աշխարհագրական դիրքը, ափագիծը, ռելիեֆը /դաս 1/
- Աֆրիկայի կլիման, ներքին ջրերը /դաս 2/
- Աֆրիկայի բնական զոնաները: Սավանաների զոնայի բնութագիրը /դաս 3/
- Թեմայի կրկնություն, գործնական աշխատանք /դաս 4/

Դաս 1

Օրվա դասի թեմատիկ պլանավորում [Տես. հավելված 5]

Աֆրիկայի աշխարհագրական դիրքը, ափագիծը և ռելիեֆը ենթաթեման դասավանդելու ժամանակ խթանման փուլում ընտրել եմ մտքերի տարափ մեթոդը, որը կարծում եմ միջին դպրոցում սովորող երեխաների համար կարևոր է, քանի որ այդ տարիքում երեխաներն ավելի շատ խոսում և պատմում են: Իմ համոզմամբ այս մեթոդի կիրառումը շատ արդյունավետ է բանավոր խոսքը զարգացնելու, դասը կենդանի և աշխույժ դարձնելու, երևակայությունը և ստեղծագործական մտածողությունը խթանելու, լսելու, համագործակցելու, համագործակցելու, համարձակություն ու ինքնավստահություն ներշնչելու համար: Առաջադրվեց որպես հասկացություն թեմայի վերնագիրը «Աֆրիկա», իսկ սովորողները սկսեցին ազատ արտահայտել իրենց կարծիքների ու գիտելիքների պաշարները տվյալ թեմայի

շրջանակում: Այնուհետև սովորողները բաժանվելով աշխատանքային խմբերի /8 սովորող/ մուտքագրում են ցանկացած պատասխան, իսկ խմբի մյուս անդամները լսում և մտապապահում են հնչող կարծիքները:

Այնուհետև իմաստի ընկալման փուլում շրջագայություն պատկերասրահում մեթոդի օգտագործմամբ փորձեցի պահպանել հետաքրքրության աճը սովորողների մոտ: Այս մեթոդի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ, զարգացնել լսելու, ինքնուրույն և ստեղծագործաբար մտածելու, աշխատանքի արդյունքները ներկայացնելու հրմտություններ:

Կատարվեց խմբային աշխատանք /3 խումբ-յուրաքանչյուրում 8 սովորող/: ՈՒսումնական նյութը բաժանվեց երեք մասի /աշխարհագրական դիրք, ափագիծ, ռելիեֆ/ և յուրաքանչյուր խմբի տրվեց դրանցից մեկը ուսումնասիրելու:

Յուրաքանչյուր խմբի աշխատանքը գծապատկերի և օբյեկտների դասակարգման աղյուսակների տեսքով փակցվեց գրատախտակին: Այնուհետև խմբերը «պատկերասրահով» շրջելով և կանգնելով աշխատանքների մոտ խմբի անդամի ներկայացմամբ փորձեցին յուրացնել դասը յուրովի:Աշխատանքի դիտումից հետո կատարվեց վերլուծություն և եզրահանգում:

Կշռադատման փուլում դասը յուրացնելուց հետո ներկայացվեց առաջադրանքներ, որոնց լուծումը պահանջում էր սովորողներից ստեղծարարական և նորովի մտահանգումներ: [Տես. հավելված 6]

Խմբերի պատասխանները այլընտրանքային էին և գոհացուցիչ, կատարվեց գնահատում: [Տես. հավելված 7]

Դաս 2

Օրվա դասի թեմատիկ պլանավորում [Տես. հավելված 8]

Աֆրիկայի կլիման, ներքին ջրերը ենթաթեման ուսումնասիրելիս խթանման փուլում ընտրել եմ հարցադրման մեթոդը՝ առաջադրելով հետևյալ հարցերը «ինչ գիտեք կլիմայաստեղծ գործոնների մասին»: Այնուհետև գրատախտակին գրվեցին այն

մտքերը, որոնք առաջադրվեցին սովորողների կողմից՝ առանց մեկնաբանության և վերլուծության: Քանի որ դասը կազմված էր երեք տարրերի բովանդակային բաղադրիչներից /1.կլիմայաստեղծ գործոն-ներ, 2.կլիմայական գոտիներ և մարզեր, 3.ներքին ջրեր/, ապա իմաստի ընկալման փուլում ընտրել եմ խմբային հետազոտական մեթոդը և դասարանը բաժանել եմ երեք խմբի/8 սովո-րող/: Այնուհետև խմբի մեկ համարները/8 սովորող/հավաքվում են 1 համարի սեղանի շուրջ 2-րդ համարները՝ 2-րդ սեղանի շուրջ, 3-րդ համարները՝ 3-րդ սեղանի շուրջ: Այդ երեք խմբերը կոչվեցին փորձագիտական խմբեր և ամեն մի խումբ յուրացնելով իրեն հանձնարարված թեման կատարեց փորձագիտական քննարկում և վերլուծություն խմբի ներսում: Հետո հին խմբերը տրոհվեցին և ձևավորվեցին նոր խմբեր, որտեղ յուրաքանչյուր հին խմբի անդամ նոր խմբի մյուս անդամներին ներկայացնում է իր խմբում վերլուծության արդյունքում յուրացված գիտելիքները: Արդյունքում նոր դասի թեման ոչ միայն յուրացվեց դասին, այլ նաև քննարկվեց և վերլուծության ենթարկվեց: Փորձագիտական խմբերի վերլուծության արդյունքների ճշտությունը ուղղորդվում և կազմակերպվում էր իմ կողմից:

Կշռադատման փուլում իմ ընտրությամբ օգտագործվել են այնպիսի առաջադրանքներ, որոնց լուծումը պահանջում է վառ երևակայություն և ստեղծագործական մոտեցում: [Տես. հավելված 9]

Նպատակադրումս ճիշտ և տեղին է , քանի որ առաջադրանքներով կվերհանվի աշակերտների ստեղծարարական ունակությունների մակարդակը: Դասի ընթացքում կատարվեց գնահատում: [Տես. հավելված 10]

Դաս 3

Օրվա դասի թեմատիկ պլանավորում [Տես. հավելված 11]

Աֆրիկայի բնական զոնաները: Սավանաների զոնայի բնութագիրը ենթաթեման ուսումնասիրելիս խթանման փուլում ընտրել եմ պրիզմա մեթոդը, որը ուսումնառության ակտիվ մեթոդ է, ժամանակատար չէ և անցնում է արագ և աշխույժ: Այն խրախուսում է սովորողին ազատ ու անկաշկանդ մտածել և խթանում է երևակայությունը: Մեթոդն արդյունավետ է այն դեպքում, երբ պահանջվում են

կարճ, համառոտ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարկումներ: ՈՒստի գրատախտակին կազմված պրիզմայի սկզբում գրել եմ դասի հիմնական բովանդակությանը վերաբերող սկզբնաբառը ,,Սավանաների զոնա“, իսկ վերջում՝ վերջնաբառը ,,Զոնայի պահպանություն“: Այնուհետև պրիզման սովորողների կողմից լրացվեց համապատասխան գաղափարներով՝ բխեցնելով դրանք սկզբնաբառից, միաժամանակ՝ խմբավորելով ընդհանուր հասկացությունների, երևույթների ու օբյեկտների անվանումներով: [Տես. հավելված 12]

Իմաստի ընկալման փուլում օգտագործել եմ ՓԳՀ մեթոդը, քանի որ այն արդյունավետ է և օգնում է սովորողներին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը: Կարդալիս կատարվել են փոխգործուն գրառումներ հետևյալ նշաններով՝

- „V“-ես այդ մասին գիտեի
- „+“ – ես այդ մասին սովորեցի
- „?“ – ինձ համար անհասկանալի է
- „!“ - ինձ համար հասկանալի է

Կարդալու ընթացքում ստացված նմուշները ծառայեցին որպես հարմար տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար: Հետո այդ տվյալների հիման վրա լրացվեցին անհատական աղյուսակները:

Կշռադատման փուլում ընտրել և առաջադրել եմ հետևյալ առաջադրանքը, որը խթանում է սովորողի ստեղծարարական ունակությունները: [Տես. հավելված 13]

Արդյունքում սովորողներից ակնկալվող պատասխաններից հաստատվեց նրանց ստեղծարարական ունակությունների բավականին բարձր մակարդակ: Պատասխանների հիման վրա կատարվեց գնահատում: [Տես. հավելված 14]

Դաս 4

Օրվա դասի թեմատիկ պլանավորում [Տես. հավելված 15]

Աֆրիկա թեման յուրացնելուց հետո շատ կարևոր է նաև այդ թեմայի ամրապնդման համար անցկացնել կրկնության դաս: Կրկնության տիպի դասի նպատակն է գիտելիքների և կարողությունների ամրապնդում: ՈՒսուցման

գործընթացում կիրառվող այդ դասաձևը շատ հազվադեպ է կազմակերպվում, քանի որ դրա համար առանձին ժամ նախատեսված չէ: Այն կազմակերպվում է ուսուցչի հայեցողությամբ՝ ելնելով կոնկրետ հանգամանքներից: Կրկնության դասի մեջ կիրառվող մեթոդական համակարգը բազմազան է: ԵՎ իմ ընտրութ-յամբ թեմայի ամփոփում և ամրապնդում իրականացվեց թեստային առաջադրանքներով, որը կատարվեց խմբային տարբերակով: Խմբի յուրաքանչյուր սովորողի տրվեց 5 թեստային առաջադրանքներից բաղկացած հայտորոշիչ թեստ /1,2,3 համարներով/: [Տես. հավելված 16]

Խմբի բոլոր սովորողների կողմից լուծված թեստային առաջադրանքների գումարային արդյունքը բաժանվեց ընդհանուր խմբում սովորող աշակերտների թվի վրա և ստացված միջին արդյունքի գնահատականով որոշվեց լավագույն խմբային աշխատանքը դասարանում: [Տես. հավելված 17]

Դասի ընթացքում կատարվեց նաև գործնական աշխատանք, որի ընթացքն ու նկարագրությունը ընդգրկված է հետազոտական աշխատանքիս գործնական համատեքստ բաժնում:

5. Գրականության ցանկ

1.Маслоу А., Дальние переделы человеческой психики, СПБ: Евразия /1999/, 432с.

2.Дронова Т.А., Формирование интегрально-креативного стиля мышления будущих педаго-

гов в образовательной среде вуза: Москва-Воронеж /2007/, 368 с.

3.Creativity: from potential to realization, edited by Robert J. Sternberg, Elena L. Grigorenko, and

Jerome L. Singer /2004/, 223 p.

4.Kane P., The Play Ethic: A manifesto for a different way of living, Macmillan, London /2004/

5.Torrance E.P., The Nature of Creativity as Manifest in the Testing. The Nature of Creativity.

Cambridge. /1988/ 75 p.

6.Guilford J.P., Structure of intellekt model: New York /1969/ 64 p.

7.Աղուզումցյան Ռ.Վ., Պետրոսյան Լ.Հ., Պողոսյան Ս.Հ., Խաչատրյան Ա.Ռ., Կառավարիչնե-

րի հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները, Երևան /2016/ 8.Шурхут С.М., Подростковый возраст: развитие креативности, самосознания, эмоций, кому-

никации и ответственности. СПБ., Речь, /2006/ 112 с.

6. Դասապլաններ և հավելվածներ

Հավելված 1.

I-խումբ	II-խումբ	III-խումբ
Սահարա	Սահարա	Սահարա
շոգ	չոր	անջուր
այսբերգ	Նեղոս գետ	արտեզյան ջրեր, նավթ,գազ
գյուղատնտեսություն	գյուղատնտեսություն	տնտեսություն

Հավելված 2

I-խումբ

Սահարան շոգ անապատ է, որտեղ ջուր չկա: Սահարան ոռոգելու համար մենք Անտարկտիդայից կարող են այսբերգները կոտրատել և տեղափոխել այստեղ: Այսբերգի կտորը տեղափոխելու համար անհրաժեշտ է սառցահատ նավեր: Կկառուցենք ջրամբար և այսբերգի հալքից գոյացած ջուրը կպահեն այնտեղ, որպեսզի ոռոգենք դաշտերը: Անցկացնելով ջրանցքներ և աճեցնելով բույսեր մենք կզարգացնենք գյուղատնտեսությունը Սահարայում:

II-խումբ

Սահարան չոր անապատ է, որտեղ ջերմաստիճանը շատ բարձր է/50-60°/: Եգիպտոսը Նեղոսի պարգևն է: Նեղոսից անցկացնելով ջրանցքներ/գետնի տակով, որպեսզի քիչ ջուր գոլորշիանա/ կարող ենք մյուս պետությունների տարածքներն էլ ոռոգենք: Ոռոգման շնորհիվ այստեղ կաճեցնենք փյունիկյան արմավենի և բանջարեղեն: Ոռոգման շնորհիվ Սահարայի տարածքում գտնվող պետություններում կզարգանա գյուղատնտեսությունը:

III-խումբ

Սահարան անջուր և շոգ անապատ է: Սակայն նրա ընդերքում կա ստորերկրյա ջուր,նավթ, գազ և այլ օգտակար հանածոներ: Եթե ստորերկրյա ջրերը մենք գտնենք՝ կառաջանա օազիս, որտեղ կզարգանա գյուղատնտեսությունը: Նավթի և գազի արդյունահանման դեպքում կզարգանա տնտեսությունը: Սահարայում կբնակվեն մեծ թվով մարդիկ և կզարգանա տուրիզմը:

Հավելված 3





Հավելված 4

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

ԸՍՏ Ջ. ԲՐՈՒՆԵՐԻ ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՄԱԿԱՐԴԱԿԻ

Խումբ	ՄԱԿԱՐԴԱԿ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ /%/
III	Բարձր	45
I	Միջին	35
II	Ցածր	20

Հավելված 5

Օրվա դասի պլան

ՈՒսուցիչ՝ Ա. Թևադորոսյան

Առարկա	Աշխարհագրություն
Դասարան և կիսամյակ	I-կիսամյակ VIգ
Թեմայի գլուխ և թեմա	Թեմա 3 § 7
Օգտագործվող նյութեր	դասագիրք-Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն/ հեղինակներ՝ Ա.Հովսեփյան,Ա. Գրիգորյան, Մ. Մանասյան-Երևան՝ 2018/ Աֆրիկայի ֆիզիկական քարտեզ, ուրվագծային քարտեզներ
Ամբողջական պատկեր և դասի նպատակ	Սովորողները գիտեն մայրցամաքների և օվկիանոսների տարածական տեղաբաշխ-ման մասին, կիմանան Աֆրիկա մայրցամաքի աշխարհագրական դիրքի առանձնահատկութ- յունների մասին, գիտելիքները կօգտագործեն Աֆրիկայի կլիմայի, կլիմայական գոտիների և ներքին ջրերի ուսումնասիրության ժամանակ, գիտելիքները իրացնելով կարժեվորեն Աֆրիկայի բնական պայմանները և ռեսուրս-ները օգտագործելու ժամանակ:
Վերջնարդյունք-ներ	Ա- մակարդակ՝ սովորողները կկարողանան նկարագրել Աֆրիկայի աշխարհագրա-կան դիրքը, ռելիեֆը, թվարկել և քարտեզի վրա ցույց տալ ափերը ողողող օվկիա-նոսները, ծովերը, կղզիները, թերակղզիները և ծայրակետերը: Բ-մակարդակ՝ սովորողները կկարողանան համեմատել Աֆրիկայի մակերևույթի ձևերը ըստ բարձրության և դրանք ցույց կտան Աֆրիկայի

	ֆիզիկական քարտեզի վրա և կլրացնեն ուրվագծային քարտեզը: Գ-մակարդակ՝ սովորողները կկարողանան վերլուծել Աֆրիկայի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները և կկատարեն հանձնարարված առաջադրանք-ները:
Դասի ընթացք /ընտրված մեթոդներ/	Մեթոդներ՝ մտքերի տարափ, շրջագայություն պատկերասրահում,հարցադրում Կազմակերպչական մաս, հին դասի հարցում/ամրապնդում/-տևողությունը-10 րոպե Խթանման փուլ/մեթոդ-մտքերի տարափ/-տևողությունը 7-10 րոպե Աֆրիկա հասկացության տակ հավաքագրվում են մտքերը, առանց մեկնաբանութ-յան: Իմաստի ընկալման փուլ/մեթոդ-շրջագայություն պատկերասրահում/-տևողությու-նը 15րոպե Խմբային աշխատանքի/3 խումբ/ միջոցով դասի համապատասխան բաժինները/աշ-խարհագրական դիրք, ափագիծ, ռելիեֆ/ սովորում և յուրացվում է դասարանում: Կշռադատման փուլ/մեթոդ-առաջադրանքների հարցադրում/տևողությունը 10 րոպե Սովորողները կատարում են տրված առաջադրանքները:
Տերմիններ	Աշխարհագրական դիրք, ափագիծ, ծայրակետեր, Սոմալի թ-կզ, Մադակասկար կզ., անապատներ/Սահարա, Լիբիական, Նուբիական, Կալահարի, Նամիբ/ Սուդա սարահարթ, լեռներ/Ատլասի, Կապի, Դրակոնյան/ հրաբուխներ/Կիլիմանջարո, Կա-մերուն/, բարձրավանդակներ/Եթովպական, Արևելաաֆրիկական/ ծովեր/Միջեր-կրական, Կարմիր/,Գվինեական ծոց, նեղուցներ/ Ջիբրալթարի, Մոզամբիկի և այլն/
Տնային աշխա-տանք	Պատասխանել 1-6 հարցերին, լրացնել ուրվագծային քարտեզը

Հավելված 6

Առաջադրանք 1

32 հազ. քառ. կմ-ի վրա ձգվող Աֆրիկայի ափագիծը քիչ է մասնատված և հիմնականում ժայռոտ է, ինչն անբարենպաստ է նավահանգիստների կառուցման համար: Ինչպե՞ս կարելի է ափագիծն օգտագործել նավահանգիստներ ունենալու համար:

Առաջադրանք 2

Ի՞նչ կլինի Աֆրիկական պլատֆորմին, եթե Արևելաաֆրիկական Մեծ բեկվածքային գոտում ուժեղանան երկրակեղևի շարժման գործընթացները /30-100 կմ/:

Հավելված 7

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

/դաս 1/

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
9	10-9
9	8-7
7	6-4
0	3-1

Հավելված 8

Օրվա դասի պլան .

ՈՒսուցիչ՝ Ա. Թևադորոսյան

Առարկա	Աշխարհագրություն
Դասարան և կիսամյակ	I-կիսամյակ VIգ
Թեմայի գլուխ և թեմա	Թեմա 3 § 8
Օգտագործվող նյութեր	դասագիրք-Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն/ հեղինակներ՝ Ա.Հովսեփյան,Ա. Գրիգորյան, Մ. Մանասյան-Երևան՝ 2018/ Աֆրիկայի ֆիզիկական և կլիմայական քարտեզներ, ուրվագծային քարտեզներ
Ամբողջական պատկեր և դասի նպատակ	Սովորողները գիտեն Աֆրիկայի ֆիզիկաշխարհագրական բնութագիրը, կիմանան Աֆրիկա մայրցամաքի կլիման, կլիմայական գոտիների տեղաբաշխման առանձնահատկությունների մասին, գիտելիքները կօգտագործեն Աֆրիկայի բնական զոնաների, սավանաների ուսում-նասիրության ժամանակ, գիտելիքները իրացնելով կարժեվորեն Աֆրիկայի կլիմայական պայմանները և ներ-քին ջրային ռեսուրսները նպատակային օգտագործելու դեպքում:
Վերջնարդյունք-ներ	Ա- մակարդակ՝ սովորողները կկարողանան նկարագրել Աֆրիկայի կլիման,կլիմա-յական գոտիները, թվարկել և քարտեզի վրա ցույց տալ կլիմայական գոտիները, գե- տերը և լճերը: Բ-մակարդակ՝ սովորողները կկարողանան համեմատել Աֆրիկայի կլիման, կլիմա-յական գոտիները ըստ առանձնահատկությունների և դրանք ցույց կտան Աֆրիկայի կլիմայական քարտեզի վրա և կլրացնեն ուրվագծային քարտեզը: Գ-մակարդակ՝ սովորողները կկարողանան վերլուծել Աֆրիկայի

	կլիմայական պայ- մանների առանձնահատկությունները և կկատարեն հանձնարարված առաջա-դրանքները
Դասի ընթացք /ընտրված մեթոդներ/	Մեթոդներ՝ հարցադրում, հետազոտական խմբային ,հարցադրում Կազմակերպչական մաս, հին դասի հարցում/ամրապնդում/-տևողությունը-10 րոպե Խթանման փուլ/մեթոդ-հարցադրում/-տևողությունը 7-10 րոպե Կատարված հարցադրմամ հավաքագրվեց Աֆրիկա կլիմայի մասին մեկնաբանութ-յուններ: Իմաստի ընկալման փուլ/մեթոդ-հետազոտական խմբային/-տևողությու-նը 15րոպե Խմբային աշխատանքի/3 խումբ/ միջոցով դասի համապատասխան բաժինները/կլի- ման ձևավորող գործոններ, կլիմայական գոտիներ, ներքին ջրեր/ սովորում և յու-բացվում է դասարանում: Կշռադատման փուլ/մեթոդ-առաջադրանքների հարցադրում/տևողությունը 10 րոպե Սովորողները կատարում են տրված առաջադրանքները:
Տերմիններ	Կլիմայական գոտիներ/հասարակածային, մերձհասարակածային, արևադարձային, մերձարևադարձային/,սառը ծովային հոսանքներ/Կանարյան,Բենգելյան,Սոմալիի/, տաք ծովային հոսանքներ/Գվինեական, Մոզամբիկի, Ասեղի/, վաղիներ, գետեր/Նե-ղոս, Նիգեր, Կոնգո, Զամբեզ, Օրանժ, Լիմպոպո, Շարի/, լճեր/Վիկտորիա, Չադ,Տան-գանիկա, Նյասա,Ռուդոլֆ, Թանա/, ջրվեժներ/Վիկտորիա, Լիվինգստոնի/
Տնային աշխա-տանք	Պատասխանել 1-7 հարցերին, լրացնել ուրվագծային քարտեզը

Հավելված 9

Առաջադրանք 1

Ի՞նչ տեղի կունենա, եթե Մոզամբիկի տաք ծովային հոսանքի փոխարեն այդ տարածքով անցներ ծովային սառը հոսանք:

Առաջադրանք 2

Ի՞նչ կապ կա գետերի և ռելիեֆի, գետերի ու կլիմայի միջև:

Հավելված 10

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

/դաս 2/

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
8	10-9
11	8-7
6	6-4
0	3-1

Հավելված 11

Օրվա դասի պլան
ՈՒսուցիչ՝ Ա.Թևադորոսյան.

Առարկա	Աշխարհագրություն
Դասարան և կիսամյակ	I-կիսամյակ VIգ
Թեմայի գլուխ և թեմա	Թեմա 3 § 9
Օգտագործվող նյութեր	դասագիրք-Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն/ հեղինակներ՝ Ա.Հովսեփյան,Ա. Գրիգորյան, Մ. Մանասյան-Երևան՝ 2018/ Աֆրիկայի բնական զոնաների քարտեզ, ուրվագծային քարտեզներ
Ամբողջական պատկեր և դասի նպատակ	Սովորողները գիտեն Աֆրիկայի կլիմայի և ներքին ջրերի ընդհանուր բնութագիրը, կիմանան Աֆրիկա մայրցամաքի բնական զոնաների տեղաբաշխման առանձնա-հատկությունների մասին, գիտելիքները կօգտագործեն Աֆրիկա թեմայի կրկնության և գործնական առաջա-դրանքի կատարման ժամանակ, գիտելիքները իրացնելով կարժեվորեն Աֆրիկայի բնական զոնաների և հատկապես սավանայի զոնայի բուսակենդանական ռեսուրսները նպատակային օգտագործելու դեպքում:
Վերջնարդյունք-ներ	Ա- մակարդակ՝ սովորողները կկարողանան նկարագրել Աֆրիկայի բնական զոնա-ները, թվարկել և քարտեզի վրա ցույց տալ բնական զոնաները: Բ-մակարդակ՝ սովորողները կկարողանան համեմատել Աֆրիկայի բնական զոնա- ները ըստ առանձնահատկությունների և դրանք ցույց կտան Աֆրիկայի բնական զո- նաների քարտեզի վրա և կլրացնեն ուրվագծային քարտեզը:

	Գ-մակարդակ՝ սովորողները կկարողանան վերլուծել Աֆրիկայի սավանաների զո-նայի բուսակենդանական առանձնահատկությունները և կկատարեն հանձնարար- ված առաջադրանքները
Դասի ընթացք /ընտրված մեթոդներ/	Մեթոդներ՝պրիզմա, ՓԳՀ ,հարցադրում Կազմակերպչական մաս, հին դասի հարցում/ամրապնդում/-տևողությունը-10 րոպե Խթանման փուլ/մեթոդ-պրիզմա/-տևողությունը 7-10 րոպե Առաջադրված սկզբնաբառով/սավանայի զոնա/ և վերջնաբառով /զոնայի պահպա- նություն/ համապատասխան գաղափարներով բացվեց սխեման/պրիզմա/ : Իմաստի ընկալման փուլ/մեթոդ-ՓԳՀ/-տևողությու-նը 15րոպե Կատարվեց նշաններով գրառում տեքստն ընթերցելու ժամանակ և լրացվեց անհա-տական աղյուսակում: Անհասկանալի պարբերությունները բացատրվեցին: Կշռադատման փուլ/մեթոդ-առաջադրանքների հարցադրում/տևողությունը 10 րոպե Սովորողները կատարում են տրված առաջադրանքները:
Տերմիններ	զոնաներ/հասարակածային մշտադալար խոնավ անտառներ,սավանաներ և նոսր անտառներ, կիսաանապատներ և անապատներ, մերձարևադարձային մշտականաչ կոշտատերև անտառներ և թփուտներ/, բույսեր/բառբաբ, միմոզա, արմավենի, վել-վիչի, լիաններ, խցանակաղնի/,կենդանիներ/փիղ, ռնգեղջյուր, կոկորդիլոս, էմու ջայ-լամ, զեբր, գետաձի, առյուծ, շնագայլ, ուղտ, հովազ, ցեցե ճանճ/
Տնային աշխա-տանք	Պատասխանել 1-4 հարցերին, լրացնել ուրվագծային քարտեզը

Հավելված 12

ՊՐԻԶՄԱ



Հավելված 13

Առաջադրանք 1

Եթե կլիմայի գլոբալ տաքացման պայմաններում Աֆրիկայում օդի միջին ջերմաստիճանը բարձրանա 5°C-ով ,ներկայիս բնական զոնաների տեղաբաշխումը արդյոք կփոխվի՞ և եթե այո, ապա ի՞նչ օրինաչափությամբ:

Հավելված 14

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

/դաս 3/

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
8	10-9
8	8-7
9	6-4
0	3-1

Հավելված 15

Օրվա դասի պլան

ՈՒսուցիչ՝ Ա. Թևադորոսյան

Առարկա	Աշխարհագրություն
Դասարան և կիսամյակ	I-կիսամյակ VIգ
Թեմայի գլուխ և թեմա	Թեմա 3 § 7-9
Օգտագործվող նյութեր	դասագիրք-Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն/ հեղինակներ՝ Ա.Հովսեփյան,Ա. Գրիգորյան, Մ. Մանասյան-Երևան՝ 2018/ Աֆրիկայի ֆիզիկական,կլիմայական զոտիների և բնական զոնաների քարտեզներ, ուրվագծային քարտեզներ, քարտեր, թեստեր
Ամբողջական պատկեր և դասի նպատակ	Սովորողները գիտեն Աֆրիկայի ֆիզիկաշխարհագրական բնութագիրը,կլիմայի և ներքին ջրերի, բնական զոնաների տեղաբաշխման առանձնահատկությունների մա-սին, Կատարելով թեստային առաջադրանք կամրապնդեն իրենց գիտելիքները Աֆրիկա թեմայից, գիտելիքները կօգտագործեն ինքնայուրացման գործընթացում, գիտելիքները իրացնելով կարժեվորեն Աֆրիկայի բնական ռեսուրսները և պայման-ները նպատակային օգտագործելու դեպքում:
Վերջնարդյունք-ներ	Ա- մակարդակ՝ սովորողները կկարողանան նկարագրել Աֆրիկան/աշխարհագրա- կան դիրք,կլիմա,ներքին ջրեր, բնական զոնաներ/, Բ-մակարդակ՝ սովորողները կկարողանան համեմատել Աֆրիկայի աշխարհագը-րական դիրքի,կլիմայի,ներքին ջրերի և բնական զոնաների տարածական տեղա- բաշխման առանձնահատկությունները: Գ-մակարդակ՝ սովորողները կկարողանան վերլուծել Աֆրիկայի աշխարհագրա-կան դիրքի,կլիմայի,ներքին ջրերի և բնական զոնաների տարածական ասպեկտ-ները և կկատարեն գործնական առաջադրանք:

Դասի ընթացք /ընտրված մեթոդներ/	Մեթոդներ ամփոփիչ թեստադրում,գործնական աշխատանքի առաջադրում Կազմակերպչական մաս/տևողությունը-5 րոպե/ Ամփոփիչ փուլ-թեստային աշխատանք/տևողությունը 15 րոպե/ Ընթացք և կշռադատում-գործնական աշխատանք/տևողությունը 25րոպե Սովորողները կատարում են տրված գործնական առաջադրանքը/փորձագիտական 3 խումբ/:
Տնային աշխա-տանք	Պատասխանել հարցերին և առաջադրանքներին

Հավելված 16

Հայտորոշիչ թեստ ,,Աֆրիկա“ 1

Դասարան՝ ————

Խումբ՝ ————————

1. Այս հրաբուխը կոչվում էր «քարավանների լեռ», քանի որ նրա գագաթին ընկած սառցադաշ-տերը հեռու տեսանելի էին և ծառայում էին որպես տարբեր ապրանքներ տեղափոխող քարա-վանների տեղեկատու: Աֆրիկայի ո՞ր հրաբխին է վերաբերում տեքստը:

1. Կամերուն 3. Քենիա

2. Կիլիմանջարո 4. Դալոն

2. Աշխարհագրական առանձնահատկությունները դասավորեք հյուսիսից հարավ հաջորդականության հաջորդականությամբ :

1. Շաքարավազ 3. Ատլաս

2. Կոնգո 4. Կալահարի

3. Ոսկու և ադամանդի հանքավայրերի տեղակայման հիմնական տարածքն է

1. Հյուսիսային Աֆրիկայի հարթավայրեր

2. Հարավային և Կենտրոնական Աֆրիկա

3. Ատլաս լեռներ

4. Հյուսիսարեւելյան Աֆրիկա

4. Աֆրիկայի ո՞ր հատվածն է հարուստ նավթով և բնական գազով

1. Արեւմտյան 3. Հյուսիսային

2. Հարավային 4. Արեւելյան

5. Հասարակածային անտառների բուսական աշխարհի բազմազանության և հարստության հիմնական պատճառն է.

1. Պտղաբեր հողեր 3. Հարթ ռելիեֆ

2. Խիտ գետային ցանց 4. Կլիմայական պայմաններ

Գնահատական՝ _____

Անուն, ազգանուն՝ _____ _____

Հայտորոշիչ թեստ „Աֆրիկա“ 2

Դասարան՝ _____

Խումբ՝ _____

1. Աֆրիկայի աշխարհագրական դիրքը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

1. Մայր ցամաքը ավելի շատ գտնվում է հարավային կիսագնդում:

2. Մայր ցամաքը ավելի շատ գտնվում է արևմտյան կիսագնդում:

3. Մայր ցամաքը գտնվում է բոլոր չորս կիսագնդերում:

4. Հասարակածը հատում է մայր ցամաքը հենց մեջտեղում:

2. Հեռավոր անցյալում Աֆրիկա մայրցամաքը մաս էր կազմում.

1. Լաուրասիա 3. Պանգեաս

2. Գոնդվանա 4. Թեթիս

3. Սա շոտլանդացի ճանապարհորդ է `միսիոներ, Աֆրիկայի հետազոտող: Իր անունով անունով քաղաքներ, լեռներ: Նա 1855 թվականին հայտնաբերեց ջրվեժ, որը նա անվանեց Անգլիայի թագուհու անունով: Այս մարդը պայքարեց ստրկության վերացման համար, քրիստոնեություն ընդունեց աֆրիկացիներին: Նա Աֆրիկային տվեց իր կյանքի մեծ մասը, տեղի բնակչությունը նրան տվեց «Մեծ առյուծ» մականունը: Ո՞ւմ մասին է խոսքը:

1. Բ. Դիաս 3. Դ. Լիվինգսթոն

2. Վասկո դա Գամա 4. Վ.Յունկեր

4. Ինչպիսի՞ ռելիեֆ է համապատասխանում մայրցամաքի ամենաբարձր կետին

1. Քեյփ լեռներ 3. Դրակենսբերգ լեռներ

2. Ատլաս 4. Արևելյան Աֆրիկայի սարահարթ

5. Աֆրիկայի ռելիեֆում գերակշռում են հարթ տարածքները, քանի որ ...

1. Մայրցամաքի հիմքում ընկած է հնագույն հարթակ

2. Մայրցամաքում բարձր սարեր չկան

3. Մայրցամաքում ծալված տարածքներ չկան

4. Անապատները զբաղեցնում են մայր ցամաքի մեծ մասը

Գնահատական՝ _____

Անուն, ազգանուն՝ _____ _____

Հայտորոշիչ թեստ „Աֆրիկա“ 3

Դասարան՝ _____

Խումբ՝ _____

1. Անձրևի ժամանակ ջրով ողողված Աֆրիկայի չորացած գետերի կամ ժամանակավոր ջրհոսքերի անունները կոչվում են.

1. Գոռում է 3. Սամում

2. Վադի 4. Օազիս

2. Խոշոր սմբակներն ավելի տարածված են ...

1. Անապատում 3. Սավաննաներում

2. Լեռներում 4. Հասարակածային անտառներում

3. Որոշեք կլիմայական գոտին ըստ նկարագրության. «Առավոտյան պարզ է, կեսօրին ամպերը հավաքվում են, իսկ կեսօրից հետո անձրև է գալիս: Մի քանի րոպեից արևը կրկին հանդարտ է և փայլում է »:

1. Արեւադարձային կլիմայական գոտի

2. Հասարակածային կլիմայական գոտի

3. Մերձարևադարձային կլիմայական գոտի

4. Կիսամյակային կլիմայական գոտի

4. Աֆրիկայի ո՞ր բնական գոտին է առավելապես տուժում մարդու տնտեսական գործունեությունից:

1. Անապատ

2. Հասարակածային անտառներ

3. Սավաննա

4. Կոշտ տերևավոր մշտադալար անտառների և թփերի գոտի

4. Աֆրիկայի ո՞ր հատվածն է հարուստ նավթով և բնական գազով.

1. Արևմտյան 3. Հյուսիսային

2. Հարավային 4. Արևելյան

Գնահատական՝ _____

Անուն, ազգանուն՝ _____ _____

Հավելված 17

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

/դաս 4/

Խումբ	ԱՇԱԿԵՐՏ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
III	8	8
I	8	7
II	8	6

Հավելված 18

Ջ. ԲՐՈՒՆԵՐԻ ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

ՄԱԿԱՐԴԱԿ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ /%/

Բարձր	50 և ավելի
Միջին	30-50
Ցածր	1-30